17. ԹԱՔԱՎԵՐԻՆ ԿՆԵԳՅԸ ՎԸԵՐ ԷՇԻ ՔՈՌԱԿ Ա ՊԵՐԱԼ, ԸՆԴՐԱ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին թաքավեր։ Ըստրա էլ իլալ ա մին կնեգյ։ Սահանք քյինացալ ըն ման կյալ, տըեսալ ըն մին էշ՝ քոռակը հետան քյինալիս։ Թաքավերին կնեգյն ասալ ա. «Ընեռակ քյեզ, ա՛յ էշ, քոռակըտ հետատ կյալիս ա»։

Մին վախտ էս թաքավերին կնեգյը ետ ա ինկյալ, մին էշի քոռակ ա պերալ։ Էս կնեգյը պերալ ա մին փալան կարալ, մին ղուշղուն կարալ, ամեն սարքն էլ կարալ։ Հու վըեր էս տղան էշի քոռակ ա իլալ, նա էլ քշերը մարթ ա իլալ տանում, ցերեկը՝ էշ։ Ըստրա մարը պերալ ա փսակալ։

Մին օր հաց թխելիս էս էշին կնեգյը քշերը պերալ ա մորթին քցալ թորենը. էս էշը եր ա կացալ քշերն, ասալ ա. «Կնեգյ, էտ հինչ ա՞ էրում»։ Նա էլ ասալ ա. «Փետ պիրողին աչքը տանում կյա, փիս փետ ա պիրալ»։ Էս էշը քյինացալ ա մորթուն տեղը ման եկալ, տըեսալ ընդեղ չի։ Տանում ա եկալ տըեսալ ծիտերը ծըլվըլալիս, ինքն էլ նհետնեն ծըլվըլացալ ա, ծըլվըլացալ, ծետ տանալ, թրչալ քյինացալ մին ամարաթի կլխի տոն չինալ։

Ուրան կնեգյը եր ա կացալ շենրաշեն արկաթ վըհաքալ, մին-մին չին չինալ, քյինացալ ուրան մարթին տանիցը կախ տըվալ, եր իլալ տըեսալ խրավածծ քցածծ, ամման շամփուռիցը մին թիքյա եր ա կալալ։ Մարթը ասալ ա թա. «Էտ հի՞նչ մըրթմըրթավետ ա, տուս եկ կորի, թաչինա կնտիչըիս պտոկը կօնեմ, թող անեմ»։ Էս կնեգյը տանում ա եկալ ըղանչանք ըրալ, պղատանք ըրալ, եշալ չի,

կնտիչին կիլոխն ա կալալ, եր կալալ տանը կլխավը իրեք հետ շոռ տըվալ, տափավը տվալ փշըրալ։

Էն տղին մարն էլ մին ոչխարի բուդ ա կտրալ, տիրալ ուրուրուցումը, սոտըսոտ ծեծ տըվալ ըրորալ, ծեծ տըվալ ըրորալ, տառալ ա մին ախճիգյ։ Էս ախճիգյը մին օր տուս ա եկալ, ախճկորցը նըհետ գյուլբա ընելիս վախտը մին ղուշ եկալ ա կնտիչին առալ, եր կալալ քյինացալ։ Եկալ ըն ուրան մորև ասալ, նա էլ ասալ ա. «Ուրան ախպերն ա իլալ»։ Ետնան էս ղուշը էս ախճըկանը տարալ ա տիրալ էն ամարաթին կլխին, ասալ, թա. «Ըտեղ կացիր. ես քյինամ վըերս անեմ պիրեմ, տու էլ գյուլբա ըրա»։

Մին թաքավերի տղա յա եկալ մին պառավի տուն, ասալ, թա. «Եկալ ըմ ախճիգյ օղեմ, ախճկան տեղ ը՞ս գյիդում, ասեց»։ Էն պառավն էլ ասալ ա. «Իմ քշուքութունավըս մին փող տոք, մին լավ ախճիգյ պիրեմ քյեզ տամ»։ Էն թաքավերին տղան տըվալ ա։ Ետնան էս պառավը մին տանակ, մին ոչխար, մին էլ մին ղզղան տարալ ա էն ամարաթին տակին կրակ ըրալ, ղզղանը տիրալ կրակին, ոչխարը մորթելիս տեղը տանակը տիրալ ա մեչքին։ Էս ախճիգյն ասալ ա. «Նանի՛, նանի՛, տի՛ր վզին»։ Տիրալ ա տմակին, էլհա ասալ ա. «Նանի՛, տի՛ր վզին»։ Տիրալ ա փորեն։ Ըստհենց շատ ասալ ա, էն պառավը վզին չի տիրալ, ամմա օրիշ տեղերքին ա տիրալ։ Ետնան էս ախճիգյը մին կոլա յա կախ տըվալ, ասալ թա ախպուրիցը լցի։ Էս պառավը կոլին ոռն ա տեմ կալալ։

Էս ախճիգյն ասալ ա. «Նանի՛, նանի՛, ըռեխը տեմ կալ»։ Փորն ա տեմ կալալ։ Ըստհենց շատ ըրալ ա, ախրը էն ախճիգյը, վըեր էն կնեգյը ժինճիլ ա պերալ ընդրանավ եր իլալ, էն ախճիգյն էլ ընդրանավ վեր ա եկալ։ Էս թաքավերին տղան տրալ ա ծիյին թարքյին, եր կալալ էս ախճկանը քյինացալ։ Ախպերը եկալ ա տըեսալ վըեր գյուլրան ընդեղ վեր քցած, ժինճիլը հու քյանդիրն էլ կախ տըված։ Շատ ման ա եկալ, ման՝ քթալ չի։ Ախրը թռալ ա ամարաթին ղրաղը, իրեք հետ զինքյը տըվալ ա տափը, փշըրվալ, մեծ ճոթը անդուճն ա մնացալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինկյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։